# ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 28.07.2025թ. ժամը 11:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Եսայի Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Աղասի Թադևոսյան

Ժորա Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սուսաննա Գասպարյան

**1. «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 24.07.2025թ.-ին և 28.07.2025թ.-ին ստացված հարցադրումների և 28.07.2025թ.-ին դրանց վերաբերյալ պարզաբանումներ տրամադրելու մասին**

(Եսայի Հովհաննիսյան)

**Հարցադրում 1**

- Հարգելի պատվիրատու, ինչ է նշանակում 12 չ/բ CD դիսկ միանգամյա օգտագործման համար, 13 չ/բ DVD դիսկ միանգամյա օգտագործման համար:

**Պարզաբանում 1**

- Հարգելի հարցատու «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հրապարակված հրավերի 12-րդ չափաբաժնի մասով /CD դիսկ/ միանգամյա օգտագործման համար և 13-րդ չափաբաժնի մասով /DVD դիսկ/ միանգամյա օգտագործման համար, պետք է հասկանալ օպտիկական կրիչ, պլաստիկ սկավառակ տվյալները գրանցելու և կարդալու համար, 12-րդ չափաբաժնի մասով /CD դիսկ/- 700Mb, 13-րդ չափաբաժնի մասով /DVD դիսկ/-4,7 Gb:

**Հարցադրում 2**

- Հարգելի գործընկեր 1,2 և 16-րդ չափաբաժնում նշված տպիչների դեպքում կարող ենք ներկայացնել տպիչ, որը ունի չիփ և տպիչների հետ մեկտեղ տրամադրել քարթրիջներ, որոնք չեն ունենա տպման սահմանափակում:

**Պարզաբանում 2**

- Հարգելի հարցատու, խնդրում ենք առաջնորդվել «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերով, տրամադրել տվյալ ապրանքները ամբողջական տարբերակով, առանց լրացուցիչ ֆիզիկական միջնորդությամբ (գործարանային վիճակով, առանց չիպը լրացուցիչ անգամ լիցքավորելու):
  - Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

**2.Հրավերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին**

(Եսայի Հովհաննիսյան)

- Գնահատող հանձնաժողովը որոշեց գնումների մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում հաստատել «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով գնման ընթացակարգի

նոր փոփոխված հրավերը: Մասնավորապես փոփոխության են ենթարկվել 1-ին,2-րդ,11-րդ և 16-րդ չափաբաժիններ տեխնիկականները՝կատարվելով տեխնիկական բնութագրերի ճշգրտում:

- Հաստատել «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգի նոր հրավերը և հրավերում կատարված փոփոխության մասին հայտարարությունը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Եսայի Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Աղասի Թադևոսյան

Ժորա Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սուսաննա Գասպարյան